

Հ Ա Յ Կ Ե Լ Ն Ք

Հայկական հարցի շուրջը.- գրական հետաքրքրու-
թեան բարձրացում.- գաղտնիական ֆունդ:

Բաղկանեան պատերազմը մի անգամ ևս ուժգին թա-
փով հրապարակ նետեց շարաքախտ հայոց հարցը, որին
վիճակուած է այսքան երկար ու ձիգ տարիներ հարց մնալ:
Հայ և օտար մամուլը բարձրացած հետաքրքրութեամբ և
գործին ծառայելու անվերջ ձգտումով ամեն օր հրապար-
ակ է բերում հայկական հարցի շուրջը խնդիրներ, որոնք
լուսարանում և նորանոց հնարաւորութիւններ են առաջ
քաշում այդ հարցի նպատակայարմար և խաղաղ լուծման
համար:

Այսօր հայկական հարցը գոյութիւն ունի միմիայն
նրա համար, որովհետեւ թիւրքիայում հայեր կան, որով-
հետեւ Մեծ Հայաստանի նահանգներում հայերի կողքին գա-
րեր շարունակ նստել են քուրդն ու թուրքը, քրիստոնեա-
ների կողքին մինչև այժմ կրօնամօլ մահմեդականը, որով-
հետեւ ազատութեան, խղճի, խաղաղ աշխատանքի ու քա-
ղաքակրթական անդորր կեանքի հեռանկարով տանջուող
ժողովրդի մէջ տիրաբար ապրում է աւերածի ու կողո-
պուտի սովոր, դարերի ընթացքում ուրիշի աշխատանքով
ապրած ու երես առած, խաղաղ կուլտուրական աշխատան-
քին մինչև այժմ (900 տարուց աւելի է !) անսովոր ու
անընդունակ թուրքը կամ քուրդը: Առանց շափազանցու-
թեան կարող ենք ասել, որ հազար տարուց աւելի է, որ

հայկական ու հայարնակ այդ նահանգները աւերի ու թաւանի բաժին են մերթ թուրքերի, մերթ պարսկական թաւարների և վերջը տեական կերպով Օսմանեան տաճիկների ու քրդերի: Եւ այդքան ժամանակ դոյութիւն ունի հայկական հարցը, որովհետեւ այդքան ժամանակ հայը աւարդուել, կտարուել ու կոզոպուել է թուրքական-թաւարական անհանգիստ, վայրենի ու բարբարոս հրոսակախմբերից:

Արիստակէս Լաստիվերոցին 11-րդ դարում դարձանում էր, որ թուրքերը մի քանի տասնեակ տարուայ ընթացքում դեռ չկարողացան ըմբռնել ու հասկանալ հայոց ազգի բնութիւնը և չկարողացան յարմարուել տեղական պայմաններին ու խաղաղ աշխատանքի ճանապարհը չբռնեցին: Հապտ ինչ պիտի տաի այսօրուայ Վանեցի կամ Մշեցի հայը, որ հազար տարուայ ընթացքում դժբախտութիւն ունի անփոփոխ, իւր էութեանը միշտ հաւատարիմ քրդին ու թուրքին հարեան ունենալ: Արեւելքում իրերն ու անցքերը շատ դանդաղօրէն են փոխում, բայց քրդերի ու թուրքերի թաւանը, աւերն ու կոզուպուար, սպանութիւնն ու կտարածը երբեք չէ փոխուել և ոչ մի նշան մեզ չի ասում, որ երբ և իցէ այդ ցեղը կըթողնի ուրիշի հաշուով ապրելը և կանցնի խաղաղ աշխատանքի ուղիները:

Այդ պատուհասն է, որ հայկական հարց անորոշ և երկզիմի անունն է կրում. անկուլտուր, կուլտուրայի և յառաջադիմութեան թշնամի թուրք ու քուրդ ցեղերի հարեանութիւնն է, որ կազմում է հայկական հարցի բուն էութիւնը: Եւ բոլոր միջոցները, որ դալիս են լուծելու այդ հարցը-պէտք է հաշիւ տեանեն այդ հանգամանքի հետ, պէտք է բուն իսկ էութիւնը ինկատի առնեն:

Այսօր ամբողջ աշխարհի համար պարզ է, որ հայկական հարցը յամենայն դէպս թուրքերի միջոցով չի կարող լուծուել. նոյնքան և պարզ է, որ միայն հայերն իրանք անկարող են վերջ դնել իրանց քաղաքական տէրերի և հարեանների անարդար ու տմարդի կառավարութեանը: Հայ-

կական հարցն այսօր քաղաքականութեան նուրբ ու բազմաձաղ լարերին՝ մէջ է և եթէ որեւէ լուծում կայ—այդ գիպումատիայից ու քաղաքականութիւնից է, որ գալու է:

Մի կողմ թողնելով հայկական հարցի ընդարձակ ու երկարատև մարտիրոսագրութեան թէկուզ համառօտ սուրբագիծը, *) կուզէինք մի քանի խօսքով ակնարկել այն հիմքերը, որի վերայ յենուած Եւրոպական մամուլն ու դիւանագիտութիւնը—առաջ է տանում իւր աշխատանքը — յօդուտ հայկական հարցի:

Աշխարհագրական անուններից երկուսը՝ Սան Ստեֆանօ և Բերլին, ու թուերից դարձեալ երկուսը՝ 16-րդ նրա հակառակը՝ 61-մեծապէս ազդել են հայկական հարցի ընթացքի վրայ: Վերջին Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ յաղթական Ռուսաստանը Պոլսի պատերի տակ հասած կանգ է առնում Սան Ստեֆանօ աւանի մօտ ու հաշտութեան պայմաններ թելադրում պարտուած թուրքիային: Թուրքիան ստիպուած է լինում մի շարք ծանրակշիռ պարտաւորութիւններ յանձն առնել. մեծամեծ հողային ու կալուածական կորուստների հետ թուրքերը պարտաւորւում էին նաև դրամական ահագին տուգանք տալ Ռուսական յաղթական բանակները հայազգի նշանաւոր գեներալների հրամանատարութեան տակ դրաւել էին նաև թուրքական Հայաստանի մի մասը: Եւ ահա ժամանակի թուրքահայոց պատրիարք Ներսէս Վարժապետեանը անձնական դիմում է անում Ռուսաց բանակին: Այդ դիմումի, այլ և ռուսական պետական նպատակների ապագայ իրագործման նկատառումով ուսաները թուրքերի հետ Սան Ստեֆանոյում կապած դաշնագրի 16-րդ յօդուածը հետևեալ կերպով են խմբագրում: «Որովհետև Հայաստանի մէջ այժմ գրաւուած և թուրքիային վերագործուելիք երկրներից ռուսաց զօրքերի դուրս գալովը կարող են այնպիսի

*) Արարատի ընթերցողներին կարող ենք մատնացոյց անել նորերս լոյս տեսած պ. Սարուխանի «Հայկական հարցը և Տաճկահայոց սահմանադրութիւնը» շահաւէտ աշխատութիւնը:

ընդհարումներ և բարդութիւններ ծագել, որ խանգարեն երկու երկրների լաւ յարաբերութեանը, ուստի Բարձրագոյն Դուռը խոստանում է առանց ուշացնելու իրագործել այն բարելաւումներն ու բարենորոգութիւնները, որ հայաբնակ նահանգների տեղական պէտքերի համար անհրաժեշտ են, և երաշխաւորել դրանց ապահովութիւնը քուրդերի և չերքեզների դէմ»:

Ուրեմն Սան Ստեփանոյի դաշնագրի այս յօդուածի ուժով հայկական հարցն ամբողջովին դրւում էր ուսաց արամագրութեան տակ, և ուսւ պետութիւնը իւր շահերի ու նորատակների, այլ և հայկական պաշտօնական մարմինների ցանկութեան տեսակէտից լաւագոյն եղանակով էր մտանում այդ հարցի լուծման: Անյապաղ ռեֆորմներ, ազատ և տեղական կարիքներին համապատասխան բարենորոգումներ՝ ահա ուսաց պահանջը և թուրքերի խոստումը: Եւ որպէս զի այդ խոստումը լոկ խոստում չմնայ, դաշնագրի մէջ մի կէտ ևս մտել էր, որի համաձայն ուսական գորքերը դաշնագրին ստորագրելուց վեց ամիս յետոյ միայն դուրս էին գալու թուրքահայկական նահանգներից: Պարզ էր այդ վեց ամսուայ ընթացքում թուրքիան ուսական գորքի ճնշման տակ կրակաէր ռեֆորմների գործը:

Սակայն հայկական հարցին չէր վիճակուած այդպէս ազատ, բարեյաջող ու ցանկալի լուծում: Եւ ուսական հպարտ գէնքը չսլիտի կարողանար իւր յաղթանակի ըփանդակ պտուղները քաղել: Մէջ է խառնւում Եւրոպան. թուրքահան դիւանագիտութիւնը տեսնում է իւր գործը և Սան Ստեփանոյի ամբողջ դաշնագիրը դրւում է Եւրոպական պետութիւնների վեհաժողովի առաջ, որ գումարւում է թրքասէր Բիւսարկի հայրենիքում-Բերլինում: Սան Ստեփանոյի որոշումները մէկիկ մէկիկ քննութեան են ենթարկւում և ուսական յաջողութիւնները, նրա զինւորական դիւանագիտական յաղթանակները սահմանափակւում, նեղացւում են: Նորից հանդէս է գալիս Պոլսի պատրիարքը՝ Ներսէս Վարժապետեանը և յատուկ պատգամա-

ւորութեամբ Ներսիսական պետութիւններից վարչական ինքնավարութիւն է խնդրում Թուրքական Հայաստանի համար:

Մի ամիս տևող Բերլինի վեհաժողովի (յուլիսի 13-ից մինչև օգոստոսի 13-ը 1878) ամենամեծ գործն այն է լինում, որ Թուրքիան ազատւում է Ռուսաստանի հզօր ճանկերից և յանձնւում Ներսիսական պետութիւնների հաւաքական պաշտպանութեան: Դրա հետ միասին փոխւում է նաև հայկական հարցի բախար: Ռուսաստանը, որ Սան Ստեփանոյի դաշնագրութեամբ միակ անօրէնն էր հայկական հարցի, այժմ դառնում է մէկը այն պետութիւններից, որոնց յանձնւում է այդ հարցի կանոնաւորումը: Համաձայն դրա, Սան Ստեփանոյի 16-րդ յօդուածը հետևեալ կերպարանքն է ստանում Բերլինի 61-րդ յօդուածի մէջ. «Բարձրագոյն Դուռը խոստանում է առանց այլ ևս ուշացնելու իրագործել այն բարելաւումներն ու բարենորոգութիւնները, որ հայաբնակ նահանգների տեղական պէտքերի համար անհրաժեշտ են, և երաշխաւորել նրանց ազատութիւնը քուրդերի և շերքեզների դէմ: Նա պարբերաբար տեղեկութիւն պիտի տայ իր արած քայլերի մասին Ներսիսական պետութիւններին, որոնք հսկելու են դրա կատարմանը»:

Այս յօդուածով հայկական հարցը Ռուսաստանից անցնում է Ներսիսական դիպլոմատիային և հէնց դրանով աւելի հեռանում իւր ցանկալի լուծումից: Թուրքերը՝ հմուտ արևելեան խարդախ դիւանագիտութեան մէջ, Արդիւլ Համիդ սուլթանը՝ դիպլոմատիական յարաբերութիւնների մէջ նրբագոյն վարպետ—մօտ քառասուն տարի է Բերլինի վեհաժողովից յետոյ, որ ձգձգում են ռեֆորմների գործը ու Ներսիսական մեծ պետութիւններին առանձին առանձին ու բոլորին միասին խարելով—պարբերաբար արիւնաքամ են անում հայոց երկիրը, հայազուրկ դարձնում հայկական նահանգները, որպէսզի դրանից յետոյ իրաւունք ունենան ասելու Ներսիսային, թէ հայ չկայ, ռեֆորմները սւմ համար ներմուծուեն: Հայկական դատի Ներսիսային անցնելը

գանդադացրեց, քնացրեց այդ հարցը և կողմնակի կերպով միջոց ու հնարաւորութիւն տուեց Քուրքիային անկոնարող եղանակով շարունակել հայկական նահանգներում դարաւոր աւերն ու թալանը:

Այսօր փոքր ժողովուրդները, որոնք աէր ունեն ու տիրական, դուրս են եկել զէնքով են պաշտպանում իրանց իրաւունքները և սաղմի դաշտում զգալ տալիս թուրքերին, որ անվերջ շահագործել, անսահման բռնանալ չէ տրուած և ոչ մի ցեղի: Թուրքահայերը, որ աէր ու տիրական շունեն-մի միջոց միայն գիտեն-գիմել ուժեղներին ու ինդրել, որ գործադրուի Բերլինի դաշնադրութեան բուն իմաստը թուրքահայկական նահանգների նկատմամբ: Մենք անձամբ շատ կրցանկանայինք, որ Բերլինի դաշնադրութեան 61-րդ յօդուածը դարձեալ խմբագրուէր և իրագործուէր Սան Ստեփանոյի 16-րդ յօդուածի իմաստին համաձայն. որ փոխանակ գանդադացնող, սեփորիմներ մտցնելու խանդը ջլատող և թուրքերին կողմնակի կերպով իրանց անտէրութեան ու բռնութեան մէջ քաջալերող Եւրոպական հսկողութեան—հայկական դատը յանձնուէր կրկին սուսական պետութեան, որ սա իրաւունք ձեռք բերէր կրկին թուրքահայկական նահանգներում հսկելու սեփորիմների արագ և անարգել ներմուծմանը: Եւ հաւատացած ենք, որ մեծ Ռուսաստանը իւր պետական շահերի տեսակէտից իսկ կարագացնէր ու իրագործել կըտար 16-րդ յօդուածի բուն իմաստը:

Սակայն ինչպէս էլ լինի, կարևորն այստեղ թուրքահայերի ժամ առաջ ազատագրումն է այն դժոխային կացութիւնից, որի մէջ նա այսօր ապրում է: Ինչ կասկած, որ եթէ Եւրոպական քաղաքականութեանն այսօր յաջողուի ազատ և արդար բարենորոգումներ մտցնել թուրքահայաստանի մէջ—թուրքահայը իւր նուիրական ցանկութեան հասած կըլինի դրանով:

Կովկասահայերի, հայութեան միւս բոլոր հատուածների ձգտումն այդ է. տանելի հասարակակարգ ստեղծել թուրքաց Հայաստանի նահանգներում: Եւ բոլոր աշխա-

տանքներն ու դիւանագիտական յարաբերութիւններն, դիմումներն ու պատգամաւորութիւններն այդ նպատակի իրազորման համար են աշխատում: Եւ վերջնական նպատակի տեսակէտից կատարելապէս միենոյն է, թէ այդ բեֆորմներն արդեօք Սան Ստեֆանոյի, թէ Բերլինի մըքով կիրազորուեն. միայն թէ արագ ու արդար իրազորուեն: Բայց որովհետեւ մեր անձնական կարծիքով արագ ու արդար իրազորումը միմիայն Սան Ստեֆանոյի մըքով կարող է լինել, ուստի մենք կողմնակից ենք, որ 61-ը դարձեալ փոխուէր իր նախկին թուին — 16-ին:

Օսմանեան կայսրութեան մէջ ապրող ժողովուրդների վիճակն ու նրանց ծանր դրութեան բարելաւումը, սահական ծանր խաւարի ու բռնութեան մէջ ապրող այդ ցեղերի կացութեան նկարագիրը իրան նպատակ է դրել այս տարի Պարիզում լոյս տեսնող «Pour les Peuples d'Orient» (Արեւելքի ժողովուրդների համար) անունը կրող երկշարաթաթերիւր, որի վարիչներն են յայտնի Ֆ. Պրեսանսէն և Վ. Բերարը: Մինչև այժմ հանդէս բերած իւր մի քանի համարների մէջ թերթը ամենայն բարեխղճութեամբ հաւաքել է ամենաթարմ տեղեկութիւններ և լուսարանութիւններ օսմանահպատակ ժողովուրդների ազգի կացութեան վերաբերեալ: Թերթն ամենամեծ շափով նուիրուած է հայկական դատին և պաշտպանում է այդ դատը ու յօդուտ դրա պրոպագանդա է մղում ամենատղեարուած կերպով: Շատ ցանկալի էր, որ հայ մամուլը մի փոքր աւելի հետաքրքրուէր այդ թերթով և հայ ընթերցողներին աւելի մեծ շափով մասնակից անէր այն մտքերին ու խօհերին, որոնք դառնում են հայոց ազգի շուրջը Եւրոպական երկրներում:

Վերջին ժամանակներս կովկասահայ կեանքի ու գրականութեան մէջ շատ ուրախալի մի երևոյթ է նկատուում,

որը երանի թէ վաղանցուկ շլինէր: Ոչ միայն մեր մամուլը, այլ և ընկերութիւններն ու մասնաւոր, պատահական խումբակցութիւնները կենդանի խանդով մասնակցութիւն են ցոյց տալիս դէպի հայոց գրականութիւնը, դէպի թատրոնը: Կարդացւում, քննադատւում են հայ գրողների, բանաստեղծների ու ոտմանիստների, գրամատուրգների գործերը, յատուկ գրական դատեր են նշանակւում, դասախօսութիւններ ու հրատարակային վիճարանութիւններ են սարքւում այս կամ այն գրուածի շուրջը և կեանքը— գրական հետաքրքրութիւնը գնալով կարծես ետում է:

Դրա պատճառն անշուշտ Շանթի «Հին աստուածներ» գրամայի լոյս տեսնելով չի կարելի միայն բացատրել: Գրական հետաքրքրութիւնը մեր մամուլի ու կեանքի մէջ գալիս է ուսաց կեանքից: Ռուսաց կեանքն ու գրականութիւնը շատ հասկանալի կերպով մի բարոյեացի է մեզ՝ Կովկասահայերիս համար: Եւ ուսաց յեղափոխութեան ազմկոտ ու խռովայոյզ օրերից յետոյ այն լուրջ ինտերեսը, որ դասնում է դէպի կեանքի երևոյթների, դէպի գրականութեան լուսարանութիւնն ու ուսումնասիրութիւնը— բնականօրէն ազդում է նաև Կովկասահայերի վրայ և այստեղ համապատասխան շարժում առաջ բերում: Կովկասահայերի մէջ ևս նորից սկսում է գրական հետաքրքրութիւնն ուժեղանալ և աւելի ու աւելի լայն շրջաններ իր մէջ առնել: Ոչ միայն թիֆլիզում՝ Կովկասահայերի մտաւոր կենդրոնում, այլ և գաւառներում հետզհետէ առաջ են գալիս պարբերական ու ազատ հրատարակութիւններ, բազմանում են լոյս տեսնող հայերէն գրքերի թիւը, կազմում են փոքրիկ խմբակցութիւններ, որոնք իրանց խմբական պարապմունքների նիւթը գրականութիւնն են շինում: Հրատարակ են նետւում նաև հեռաւոր գաղութներում ապրող հարուստ ինտելիգենտ հայ երիտասարդները և իրանց ուժերի մի մասը նուիրում հայ գրականութեանը: Այդ կողմից արժանի է յատուկ ուշադրութեան և ջերմ քաջակերութեան Մոսկուայի մի խումբ հայ երիտասարդների կազմած «Պանթէոն» ընկերութիւնը, որը իրան նուիրել է

գեղարուեստական գրականութեան և հայ և օտար նշա-
նաւոր գրողների երկերի հրատարակութեանը: Մինչև այժմ
չոյս բերած Կ. Միքայէլեանի պատկերները, Վ. Տէրեանի
բանաստեղծութիւնները և Ա. Շնիցլերի առաջին հատորը
լի ու լի ազացոյց են այդ համակրելի երիտասարդների
շնորհքի և կարողութեան շափին:—

Գրական ինտերեսը աւելի ձեւաւորուելով և խտա-
նալով վերջապէս տեսանելիօրէն ամփոփուեցաւ նորերս
Թիֆլիզում կազմուած հայ գրողների ընկերութեան մէջ,
որը հրատարակ եկաւ արդէն վաղուց զգացուած պահան-
ջին բաւարարութիւն տալու—համախմբելու իր շուրջը
հայ գրողներին, նոցա սերտօրէն կապելու իրար հետ, հո-
գալու նրանց մտաւոր ու նիւթական կարիքները և աւելի
զարկ տալու հայերի գրական—մտաւոր զարգացմանը: Եւ
իրօք—հայ գրողների ընկերութիւնը մի երկու ամսուայ
ընթացքում ցոյց տուեց, որ նա անհրաժեշտութիւն էր մեր
կեանքի համար: Նրա նախաձեռնութեամբ ու ղեկավարու-
թեամբ կազմակերպուած են յատուկ գրական հանդէսներ,
գասախօսութիւններ, գրական դասեր, որոնք գրական հե-
տաքրքրութիւնն աւելի խտացնում, աւելի շեշտում են:
Այդ հետաքրքրութիւնն աւելի ևս ուժեղացաւ վերջերս
չոյս տեսած Լ. Շանթի «Հին աստուածներ» պիէսի պատ-
ճառով: Մի քանի շաբաթ շարունակ այդ գրաման կաշ-
կանդած պահեց մեր գրական ու մտաւոր շրջանների ու-
շաղրութիւնը: Երկու ամսից աւելի է, որ մեր մամուլն
ու գրականութիւնը, գասախօսութիւններն ու գրական վի-
ճարանութիւնները Շանթի և նրա «Հին աստուածների»
շուրջն են դառնում: Մի կողմ թողած այն հարցը, թէ այդ
երևոյթի մէջ մասսայական ինստիտուտները ինչ չափով
գեր են խաղում և թէ Շանթի գրաման իրօք ինչ չափով
արժանի է այդ խանդավառ սգեւորութեանն ու ընդունելու-
թեանը—մենք ուրախութեամբ արձանագրում ենք, որ մեզ
համար ամենից կարեւորը հէնց այդ խանդավառ սգեւորու-
թեան փաստն է, որ վերջապէս նկատուած է նաև մեր
գրական շրջանում: Գրական հետաքրքրութեան այդ բար-

ձրացումը, իդէական ինտերեսների այդ յաղթանակը մենք
ողջունում ենք ջերմ կերպով:

Յայտնի է, որ 1912 թուի հոկտեմբերի 13-ին ընդ-
հանուր դպրոցական ֆոնդ հաստատուեց, որի նպատակն է
գրամական միջոցներ հայթայթել ուսումնառու կրթու-
թիւնը մեր աշխարհի ամենախուլ անկիւնները տարածել:
Դժբախտաբար մեր մամուլի մի քանի օրդաններն այն
ժամանակ լուռ մնացին ու չնպատակեցին, որ այդ առողջ
և անպայմանօրէն օգտակար դադափարը տարածուէր ու
ընդհանրանար, սեփականութիւն դառնար մեր ժողովրդի
բոլոր խաւերի համար: Իրա վրայ պէտք է աւելացնել այլ
և այն, որ այս տարի Հայկական հարցը կլանել է մեր
մտաւոր շրջանների ուշադրութիւնը և կարծես դպրոցա-
կան, ուսումնական խնդիրը մտապոլեթեան տրուել: Սակայն
այդպէս չպիտի վարուի այն ինտելիգենցիան, այն հասա-
րակութիւնը, որը գիտակցում է իւր ներկայ մտմենաթի
լուրջ կարիքները: Մեր հասարակութեան բանիմաց մասը
երբէք չպիտի թողնի այժմս Հայկական հարցով դրադուելը
և այդ հարցի նպատատւոր լուծման համար իւր կարողու-
թեան շափերով աշխատելը: Իսկ կարևոր է ու անհրաժեշտ:
Բայց նոյնքան և աւելի կարևոր է, որ անուշադիր չթող-
նուեն նաև մեր կրթական ու կենսական միւս պահանջնե-
րը, որոնց բաւարարումը նոյնպէս համադրային բարօր ու
լուսաւոր ապագայի դիմաց է մեզ տանելու: Կենսունակ
ագգը, ապրելու և լուսաւորութեան ուղիներով քայլել
ձգտելու պատրաստ հասարակութիւնը իւր հանրային կա-
րիքներից մէկով դրադուելիս չի մոռանայ նաև միւսը:

Դժբախտաբար դպրոցական ֆոնդի գրամական ժողո-
վարարութիւնը շատ դանդաղ է առաջ գնում: Արդէն
Յարկենական Տարուայ կէսը անցել է և բացի էջմիածնի
նուիրած 15 հազար ուսերլուց ուրիշ մի աչքի ընկնող նախ-
րատութիւն չի եղել: Եւ որ ամենից գլխաւորն է իրանք
դպրոցական հաստատութիւններն էլ դեռ ևս որոշ մաս-

նակցութիւն շեն ցոյց տուել: Իրա պատճառներից մէկը մեր
 կարծիքով այն է, որ դրամական ժողովարարութեան գործը
 չէ կազմակերպուած: Մեծ և փոքր քաղաքներում տեղա-
 կան յանձնաժողովներ կամ շեն ստեղծուել և կամ եղած-
 ներն էլ եռանդով շեն աշխատում. հետեանքը այն դան-
 դադութիւնն ու ապարդիւնութիւնն է, որ այսօր նկատ-
 ւում է Բալրոցական Փոնդի նկատմամբ: Հայ մամուլը
 նոյնպէս այդտեղ մեղք ունի. նա պէտք է շարունակ վառ
 պահի հասարակութեան ուշադրութիւնը, պէտք է այդ ու-
 շադրութիւնն ուղղի դէպի մեր կեանքի կենսական պա-
 հանջները և այսօր յատկապէս դէպի դպրոցական գործը:
 Կարելի էր մեր բանախօսներից ու դասախօսներից, մեր
 ընկերութիւններից ու թատրոնական խմբերից սպասել,
 որ նրանք իրանց գործի ընթացքում երբեմն երբեմն յի-
 շէին նաև Բալրոցական Փոնդը և յօգուտ այդ Փոնդի գոնէ
 մի անգամ հրատարակ գային, որի հետեանքը կրկնակի
 օգուտ կը լինէր—նախ դրամական և ապա բարոյական—
 դրանով նպաստած կը լինէին դպրոցական կրթական գործի
 պրոպագանդայի զօրեղացման: Ինչպէս «Նոր Բալրոցի» այս
 տարուայ համարում պ. Ա. Արեղեանը իրաւամբ գրում
 է, «մեզ հարկաւոր է նախ գոնէ գրի սեն ու սպիտակը
 ճանաչող մի ժողովուրդ»: Սակայն ով այդ պահանջի ստի-
 պողական անհրաժեշտութիւնը ճանաչում է, պէտք է ան-
 շուշտ ամեն կերպ օգնի, նպաստի Բալրոցական Փոնդի
 դադափարի իրագործմանը—պէտք է լայն պրոպագանդայ
 մղի յօգուտ այդ դադափարի: Յատկապէս «Նոր Բալրոցի»
 համար, որ հանդիսանում է հայ ուսուցիչների և վար-
 ժուհիների օրգան, շատ ազնիւ ու նուիրական նպատակ
 պէտք է լինի ամեն կերպ ծառայել հայ դպրոցի հաստատ-
 ման, տարածման և ժողովրդականացման գործին:

Բնականաբար հայ դպրոցն ամենից շատ այն մարդ-
 կանց սրտին մօտ է, ով կոչուած է նրա մէջ ծառայելու:
 Հայ ուսուցիչն ու ուսուցչուհին ամենից շատ պիտի գի-
 տակցեն դպրոցների կարիքներն ու նրա պահանջները ուս-
 տի սպասելի էր, որ ամենից շատ ուսուցչութիւնն արձա-

գանք տար դպրոցական ֆոնդին ոչ միայն իրանց կուզէկներով այլ և իրանց խօսքով ու գրչով: Մինչև այժմ այդ ուղղութեամբ քիչ բան է նկատուում: Երանի թէ այսուհետև մեր հասարակութեան զանազան խաւերը և յատկապէս հայ ուսուցչութիւնն աւելի ներգործական մասնակցութիւն ունենար դպրոցական ֆոնդի կազմակերպման և իրագործման մէջ:—

Գէորգեան Ճեմարանի վարչութիւնը յայտնում է «Արարատ»-ի խմբագրութեան, որ Ճեմարանի ուսուցչական խումբը մի համակրելի որոշում է արել—իր տարեկան ուճիկներէ մի տոկոսը յատկացնել դպրոցական ֆոնդին: Դա համակրելի է մանաւանդ նրանով, որ համերաշխութեան մի ակտ է ու ֆոնդին մասնակցելու մի օրինակելի միջոց: Յանկալի է, որ մեր բոլոր դպրոցական և ազգային հասարակական մարմիններէ պաշտօնէութիւնները խմբովին, ընկերովի մասնակցէին այդ ազգային և կուլտուրական մեծ գործին:

Գէորգ Ալբունեան.

Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ

Ռոմանովների Կայսերական տան իշխանութեան երեքհարիւրամեայ յօրհեանք մեծ շուքով ու հանդիսաւորութեամբ տօնուեց Մայր Աթոռում Ազգիս Վեհափառ Հայրապետի ներկայութեամբ փետրուարի 20-ին և 21-ին:

Ամսի 20-ին հանդիսաւոր պատարագ և հոգեհանգիստ կատարուեց ի յիշատակ Կայսերական տան բոլոր հանգուցեալ թագաւորների, որոնց անունները շարքով թուեց օրուայ պատարագիչ Տ. Կարապետ եպիսկոպոսը: Ներկայ էին Նորին Սրբութիւն ամենայն Հայոց Կաթողիկոսը, Մայր Աթոռի ամբողջ միաբանութիւնը, Ս. Սինոդի պ. պրոկուրորն ու բոլոր ծառայողները, Գէորգեան Հոգևոր ճեմարանի ուսուցիչներն ու աշակերտները, պ. գաւառապետը և այլ պաշտօնեաներ ու աղօթողներ խումբ բազմութիւն: